թի որ աղջիկ էլաւ, էսաց, կ'ծախիս, կ'տաս, էնու տղի տղէն էլ ուտը, չ'խըլըսնայ։

Առից քեառսուն մարդ, խեծան ձիանք, կեացին դեախ Գիւրջիստան. կեացին, խասան չուրս ճամբէը արալըխ, տեսան մէկ ծըրընուկ խալաւիւր նստիր է՝ դեղ. բարիւ տուին հազրաց։

Քեառսունի բարիւն էլ առից. էսաց.—Ա՛յ որտի, ո՞րտեղ տ'երթէք։

Էսաց.—Տ'երթանք Գիւրջիստան։

Էսաց.—Ի՞նչ կը տ'երթէք։

Էսաց.—Տ'երթանք աղէկ աղջկան։

Էսաց.—Աղէկ աղջիկ որ կ'ուզէք, կեացէք Հադրբեջան։

Ճամբախ շանք իտու՝ էդա մէկ ճամբախ կ'իեայ Ռուսըստան, էդ մէկ ճամբախն էլ կ'երթայ Հադրբեջան։

Էլան, կեացին դեախ Հադրբեջան. կեացին Հադրբեջանայ քեաղաք, տեսան, որ քեառսուն աղջիկ էնդեխէն կ'կեան դեախ բախչէն, համայ մէկն էլ մարդիւ շիւր ի խագը։

Բարիւ տուին հազրաց. բարիւ առից։

Էսաց.—Տիւ ի՞նչ մարդ էք, ի՞նչ կը, յիտիւ կան կ'կէք. էդ մարդիր քիկ ինչ'ին,—Դաւթին կ'ասը։

Էսաց.—Էն քեառսուն էլ իմ ախպէրքիրն ին։

Դաւիթ դարձաւ, էսաց.—Էդա աղջիկնիր քիկ ի՞նչ ին։

Էսաց.—Բիրադի իմ քիւրիրն ին։

Էսաց.—Բիրիս էդա քեառսուն քիւր տաս իմ քեառսուն ախպօր։

Էսաց.—Տըւի քիւ քեառսուն ախպօր. իս կ'տամ, ձի կաւաթ կ'յախթը՞ տանէք։

Էսաց.—Աստըծով կ'տանինք։

Աղջիկ դարձաւ, էսաց.—Աստուած ի՞նչ կը (չաստուած գիտըն, Աստուած չըն գիտը, կռապաշտ ին)։

Էսաց.—Աստուած էն ի, ինչ զմի ստեղծը, կ'պախը։

Էսաց.—Տիւ մի չ'աստուածքիր չի՞ք պաշտը։